

Русские источники о геноциде армян в османской империи (1915-1916 годы) Сборник документов и материалов, выпуск 1. Ереван, "Апересум"-АНИ, 1995, 269 стр.

Ռուսական աղբյուրները օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության մասին (1915-1916թթ.) Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, 1-ին թողարկում. Երևան, «Առերեսում»-ԱՆԻ, 1995, 269 էջ

Թեև հայկական ցեղասպանության վերաբերյալ գրականության մեջ պատկառելի տեղ են զբաղեցնում ռուսական աղբյուրները, բայց մինչև այժմ դրանք առանձին ժողովածուով չեն հրատարակվել:

Այդ բացի լրացումն է սույն ժողովածուի լույս ընծայումը, որը կազմել են Գ.Ա.Աբրահամյանը, և Տ.Գ.Սևան-Խաչատրյանը: Առաջաբանը գրել է ակադեմիկոս Մ.Գ.Ներսիսյանը: Գիրքը հրատարակվել է Ամերիկայի Հայկական Ասամբլեայի աջակցությամբ: Նյութերը քաղված են Ռուսաստանի պետական և արտաքին քաղաքական արխիվներից, «Փաստաթղթեր ցարական և ժամանակավոր կառավարության արխիվներից: 1878-1917 թթ.» ժողովածուից, Ռուսաստանի արտաքին գործոց նախարարության գաղտնի փաստաթղթերի վերաբերյալ 1931-40 թթ. լույս տեսած մատենաշարից, իչպես և 1915-16 թթ. ռուսական մամուլի հրապարակումներից: Առաջին անգամ հրապարակված փաստաթղթերից բացի ժողովածուի մեջ ներկայացված են և արդեն հրապարակված նյութեր, որոնք տեղ են գտել հատկապես, Մ. Գ. Ներսիսյանի խմբագրած «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» և, մասամբ, Ջ.Կիրակոսյանի և Ռ.Գ.Սահակյանի կազմած «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում» ժողովածուներում: Գրքում զետեղված են 152 փաստաթուղթ և հոդված, որոնք ներկայացված են ժամանակագրական սկզբ-

բունքով և ամբողջությամբ, իսկ մամուլի առանձին հրապարակումների կրճատ շարադրանքը պայմանավորված է կրկնություններից խուսափելու և խմբագրական կարգի նկատառումներով:

Սույն ժողովածուի նյութերը պարզում են Մեծ եղեռնի որոշ մանրամասները, պատմում կոտորածների դաժան բնույթի, հայ փախստականների ողբերգական կացության մասին, նկարագրում, թե ինչպես առաջին աշխարհամարտի ծանր օրերին ռուս առաջադեմ մարդիկ սրտի կսկիծով ու անկեղծ ցասումով ոչ միայն դատապարտել են թուրքական ոճրագործությունները, այլև բարոյական, նյութական օգնություն ցույց տվել թուրքական յաթաղանից փրկված բազմահազար հայ մարդկանց:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում այն նյութերը, որտեղ լուսաբանվում են ցարական Ռուսաստանի շեշտված հայանպաստ դիրքորոշումը ինչպես թուրքիայում սկսած հայ բնակչության կոտորածների, այնպես էլ Հայկական հարցի կարգավորման խնդիրներում: Այդ երևում է, մասնավորապես, Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Սազոնովի, ռուսական դեսպանների, ինչպես և օտարերկրյա դիվանագետների միջև տեղի ունեցած պաշտոնական գրագրություններից: Ծիշտ է Ռուսաստանին, ինչպես և Ամտանտի մյուս պետություններին, առաջին հերթին հետաքրքրում էին սեփական արտաքին քաղաքական ու տնտեսական շահերը, ժողովածուի փաստաթղթերից երևում է, թե ինչպես եղեռնի ամենաճգնաժամային պահերին էլ շարունակվում էր նրանց կատաղի մրցակցությունը արևելքում իրենց դիրքերն ու ազդեցությունը ընդլայնելու համար, այնուամենայնիվ փաստ է, որ թուրքիայում հայերի ջարդերը սկսվելուց անմիջապես հետո հենց ցարական կառավարության անմիջական նախաձեռնությամբ և ջանքերով էր, որ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը թուրքիայի դեմ վճռական բողոքի ձայն բարձրացրին հայկական կոտորածների կապակցությամբ:

Ժողովածուի առանձին նյութեր վերաբերում են հայ փախստականներին, որոնց զանգվածային հոսքը դեպի Ռուսաստան սկսվել էր դեռ 1914 թ. հոկտեմբերին, ներկայացված են դրվագներ հայ խաղաղ բնակչության նկատմամբ գործադրված բռնությունների ու զազանությունների մասին:

«Կավկազսկոյե միսլ» (Պետրոգրադ) թերթը 1915 թ. հունվարի 20-ի համարում տեղեկացնում է, որ հանդես գալով Պետական դումայում, դեպուտատ Ա.Ֆ.Կերենսկին նկարագրել է այդ փախստականության

ցնցող պատկերը: Նա անձամբ տեսել է, թե ինչպես քաղցած ու հյուծված, պատահառոտված շորերով հազարավոր մարդիկ հուսահատ քայլում էին առաջ ճանապարհի կողքերին թողնելով ծծկեր երեխաների սառած դիակները: Կերենսկին եզրակացնում է, որ Կովկասում հայտնվել է մի ամբողջ ժողովուրդ Թրքահայաստանից, որ մնացել է առանց գոյության միջոցների: Նույն թերթի մեկ այլ համարում (10 փետրվարի 1915 թ.) տպագրված է Լև Տոլստոյի 'աղջկա' կոմսուհի Ալեքսանդրա Տոլստոյայի հոդվածը, որը կովկասյան ռազմաճակատում ծառայել է Իգդիրի դաշտային հոսպիտալում: Նա գրում է, որ բուժօգնության կարիք ունեցող հայ փախստականների մեծ մասը կանայք և երեխաներ են, որոնք 15-20 աստիճան սառնամանիքի տակ ստիպված են եղել անցնել լեռների միջով: Նրանք կոմսուհուն պատմել են պատերազմական գործողությունները սկսվելուց հետո թուրք զինվորների և քրդական ավազակախմբերի՝ հայերի նկատմամբ կատարած բարբարոսությունների մասին: Մի հայ կին նկարագրել է, թե ինչպես իր աչքերի առաջ խոշտանգվել ու տանջահար են արվել ամուսինն ու երեխանները: «Ես կյանքում նման տառապանքների երբեք չեմ հանդիպել»-գրում է Տոլստոյան:

Ռուսաստանի արտաքին գործոց նախարարությանն ուղղված իր գրության մեջ դոկտոր Ջավրիևը 1915 թ. մայիսին տեղեկացնում է, որ Կիլիկիայում և Ջեթթունում տեղահանվել կամ կոտորվել են գրեթե բոլոր հայերը: Նամակում նկարագրված է Վանից նահանջող ռուսական զորքերի հետ հեռացած և երևանի նահանգում ու Անդրկովկասում տեղավորված փախստականների ծանր վիճակը: Նշվում է, որ խուլերայից և այլ հիվանդություններից օրեկան մահանում են 300 մարդ, որ իրական վտանգ է ստեղծվել ողջ Կովկասով մեկ համաճարակի տարածման համար: Ռուս նախարարի օգնությունը հայցելով Ջավրիևը գրում է. «Չայ ժողովրդի համար չկա այլ պաշտպան, որը կարող լիներ որևէ բան անել, քան Ռուսաստանը»:

Գրքում զետեղված է մի փաստաթուղթ, որտեղ Կ. Մատիկյանը կովկասյան ռազմաճակատի հրամանատարությանը տեղյակ է պահում, թե ինչպես Դիլմանի շրջանի պարսիկ բնակիչները թուրք զինվորներից և քրդական խմբերից թաքցրել են քրիստոնյա հայերին և ասորիներին: Սակայն թուրքական շտաբի հրամանով ռազմական ջոկատները մտել են պարսիկների տները, բռնել 700 մարդ և կոտորել բոլորին:

«Ռուսկիե վեդոմոստի» թերթից մեջբերված Ն.Օգանովսկու թղթակ-

ցության մեջ (9 մայիսի 1915 թ.) նկարագրված են Վան լճի հյուսիսում գտնվող Արճեշ քաղաքի հայ բնակչության ջարդերը: Նշվում է, որ բանտից ազատ արձակված հանցագործներից կազմված զինված ջոկատները էրզրումի, Մուշի, Բիթլիսի, Դիարբեքիի շրջաններում անխնա կոտորում են հայերին:

Պետական դումայի անդամ Մ.Պապաջանովը Ս.Սազոնովին հայտնում է (8 օգոստոսի 1915 թ.), որ կոտորածներից փրկված և Ռուսաստան անցած հայ փախստականների թիվը մոտավոր հաշիվներով կազմում է 260 հազար մարդ: Դումայի անդամը նախարարին խնդրում է նրանց հոգսերը հոգալու նպատակով լրացուցիչ միջոցներ հատկացնել հայկական կազմակերպություններին, որոնք գործում են հայոց կաթողիկոսի հովանավորությամբ:

Մի շարք փաստաթղթեր պատմում են հայ քրիստոնյաների վիճակը կարգավորելու ուղղությամբ ձեռնարկումների մասին: Այսպես, «Ռուսկիե վեդոմոստի» թերթը 1915 թ. հունվարի 24-ի համարում հրապարակել է քաղվածք Թիֆլիսի ոստիկանապետի հրամանից, որտեղ պրիստավնիկին ցուցումներ են տրվում ուշադիր և հոգատար վերաբերմունք ցուցաբերել բռնագաղթվածների նկատմամբ:

Ս.Սազոնովը ֆինանսների մինիստրին ուղղված իր նամակում (16 նոյեմբերի, 1915 թ.) գրում է. «Նկատի ունենալով դեռևս մինչև պատերազմը Ռուսաստանի նկատմամբ թուրքահայերի գրաված դիրքը, դիրք, որով զգալի չափով բացատրվում է թուրքական կառավարության հալածանքները նրանց նկատմամբ, ես չափազանց ցանկալի եմ համարում, որպեսզի ռուսական կառավարությունը իր վրա վերցնելով տուժածներին օգնելու նախաձեռնությունը, այդ գործի համար հատկացնի 500 հազար ռուբլի...»:

Ռուսաստանի արտաքին գործերի նախարարը Վաշինգտոնի ռուս դեսպանին (8 դեկտեմբերի 1915 թ.) հանձնարարում է, որ նա ամերիկյան կառավարությանը խնդրի Կ.Պոլսում իր դեսպանին լիազորել, որպեսզի վերջինս աջակցի տարագրված հայերին օգնություն ցույց տալու գործին: Նշվում է, որ ամերիկյան դեսպանի տրամադրության տակ կղրվեն դրամական միջոցներ, որոնք նա պետք է ծախսի համաձայն Հայոց պատրիարքի ցանկության: Հեռագրում Սազոնովը զգուշացնում է ձեռք առնել բոլոր միջոցները, որ թուրքերը դրանք և զնված առարկաները չհափշտակեն հայերից:

Հատկանշանական է և այն փաստը, որ երբ Գեորգ 5-րդ կաթողիկո-

սը հայկական այրուճահեղությունը դադարեցնելու միջամտության համար դիմում է չեզոք և դաշնակից երկրներին, Ս.Սազանովը ցուցումներ է տալիս Լոնդոնում, Փարիզում, Ղոնոմում և Վաշինգտոնում ռուս դեսպաններին՝ համապատասխան կառավարությունների առաջ պաշտպանել Հայոց կաթողիկոսի խնդրանքը: Նա Ֆրանսիայի և Անգլիայի ռուս դեսպաններին հանձնարարում է կազմել Թուրքիայի դեմ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի կառավարությունների՝ հայկական կոտորածներն անհապաղ դադարեցնելու համատեղ հայտարարության տեքստ, որտեղ «...հայերի կոտորածների համար անձնական պատասխանատվությունը դրված լինի թուրքական միսիոներների խորհրդի բոլոր անդամների, ինչպես նաև քաղաքացիական և զինվորական պաշտոնատար անձանց վրա, որոնք առնչություն են ունեցել այդ իրադարձություններին» (12 ապրիլի 1915 թ.):

Նկատելի է, որ համատեղ հայտարարության վերաբերյալ Ռուսաստանի առաջարկը ոգևորությամբ չի ընդունվել Անգլիայի և Ֆրանսիայի դիվանագետների կողմից: Դա պարզ երևում է Լոնդոնում ռուսական դեսպանի՝ Ս.Սազանովին ուղղված հեռագրի բովանդակությունից (20 մայիսի, 1915 թ.): Դեսպանը նախարարին տեղեկացնում է, որ Անգլիայի արտոգործնախարար Գրեգի հետ ունեցած զրույցում վերջինս տարակուսանք է հայտնել Թուրքիային սպառնալիքներ պարունակող հայտարարություն անելու նպատակահարմարության մասին, ակնարկելով այսպես կոչված Վանի ապստամբությունը:

Այդ հարցի կապակցությամբ Սազանովը դեսպանին պատասխանում է. «Վանում հայերի ապստամբությունը հարուցված է կոտորածով, և ոչ ընդհակառակը, որովհետև հայերի համար իմաստ չունեն մինչև մեր զորքերի տեղ հասնելը սկսել շարժում քողերի ու թուրքերի գերակշիռ ուժերի դեմ»:

Սազանովը պահանջում է դեսպանից «... հավատարմագրված կառավարությանը վերստին մատնանշել, որ ցանկալի է ու ճիշտ ժամանակն է հրապարակել Բ.Դռանն ուղղված համատեղ հայտարարությունը, որը եթե նույնիսկ նրա վրա պատշաճ տպավորություն չգործի, համենայն դեպս կբարձրացնի հայերի ոգին, որոնք մեզ կարող են օգտակար լինել Թուրքիայի դեմ մղվող պայքարում»:

Ժողովածուում զետեղված մի քանի փաստաթղթերը լուսաբանում են Ռուսաստանի դիրքորոշումը պատերազմի ավարտից հետո արևմտահայերի կարգավիճակի խնդրում, բացահայտում Հայկական

հարցում Մեծ տերությունների շահադիտական նկատառումները: Ահա թե ինչ է գրում Ս.Սազոնովը Կոպկասի փոխարքային 1916 թ. հունիսի 27-ին. «Մեր զորքերի կողմից գրեթե ամբողջ Մեծ Հայքի գրավումը և այն Ռուսական կայսրության սահմանների մեջ առաջիկա ներառումը հերթի են դնում այդ մարզի ապագա կառուցվածքի հարցը...»

«Մեր առաջիկա խնդրի ամենամեծ դժվարությունն ու բարդությունը Հայկական հարցի բարձրացումն ու լուծումն է: Ամբողջությամբ վերցրած այն փոքր-ինչ դուրս է գալիս ռուսական ներքին պետական կյանքի սահմաններից, ինչպես այն առաջնակարգ միջազգային դերի պատճառով, որը Ռուսաստանին բաժին է ընկել Թուրքիայում հայկական բարենորոգումներն անցկացածնելիս, այնպես և այն պատճառով, որ Փոքր Հայքում հայերի մի մասը կմնա ուրիշ պետության իշխանության ներքո»:

Սազոնովը գտնում է, որ չի կարելի հաշվի չառնել այս երկու հանգամանքները, և շարունակում է իր նկատառումները: Մեծ Հայքում հայերը մեծամասնություն չեն: Այս դեպքում հայկական իքնավարությունը կհասցնի իրականում փոքրամասնության կողմից մեծամասնության ստրկացմանը: Եվ սակայն, չի կարելի համաձայնել այն կարծիքին, ըստ որի հայկական տարրը պետք է զոհաբերվի մահմեդականին և որ նրանց միջև եղած պայքարում կառավարական իշխանությունը պետք է բռնի մահմեդականի կողմը:

«Հարցի այսպիսի լուծումը կարող է Ռուսաստանին դնել անհարմար դրության մեջ, որովհետև բոլոր տերություններից ամենից ավելի եռանդագին նա է պաշտպանել Թուրքահայաստանում լայն բարենորոգումների անցկացման ծրագիրը: ... Մեզ համար լավագույն ելքը կլիներ Թուրքիայի նոր նվաճված մարզերը կարգավորելիս առանձնապես խստորեն ղեկավարվել օրինականության, արդարության սկզբունքներով և այդ վայրերում միանգամայն անաչառ վերաբերվել բոլոր տարբեր ազգությունների պատկանողներին, առանց նրանց միմյանց հակադրելու... Այս ձևով հնարավոր կլիներ հայերին... վերապահել դպրոցական և եկեղեցիական անկախություն, մայրենի լեզվից օգտվելու իրավունք...» և այլն:

Մինիստրը գտնում է, որ օրինականության ու անաչառության սկզբունքը պետք է պահպանվի տեղական հողատիրության և գաղութաբնակեցման հարցերը լուծելիս, նշում է այն մասին, որ մահմեդականները ինքնազուխ զավթել են արտաքսված կամ իրենց ձեռքով

սպանված հայերի ունեցվածքը և եզրակացնում. «Անհրաժեշտ է վերասպանդանոսները իսկական սեփականատերերի և նրանց ժառանգների իրավունքները»:

Կովկասի փոխարքան իր պատասխան նամակում (3-ը հուլիսի, 1916թ.) հավանություն տալով մինիստրի կարծիքին, նշում է. «ես լիովին համաձայն եմ ձեզ հետ, որ ծայր աստիճան ցանկալի կլիներ հենց հիմա, մինչև պատերազմի ավարտը ուրվագծել Ռուսական կայսրության սահմանների մեջ մեր կողմից պատերազմի իրավունքով գրավված թուրքական մարզերը ներառելու վերաբերյալ ուղեցույց սկզբունքը, և հիանալի գիտակցում եմ Չայկական հարցի բարդությունը և լուծման դժվարությունը»:

Փոխարքան գտնում է, որ Ռուսական կայսրության ներսում Չայկական հարց գոյություն չունի: Այն գոյություն ունի Ռուսաստանի կողմից գրավված թուրքական վիլայեթների մեջ: Ռուսաստանը չի կարող հաշվի չառնել պատերազմի ընթացքում մահմեդական ճնշման հետևանքով հայ ժողովրդի կրած տառապանքը: Ռուսաստանի հովանու ներքո Չայաստանի ինքնավարության հարցը փոխարքան նույնպես առայժմ հնարավոր չի համարում, որը կարող է շատ ավելի բարդացնել պատերազմի ընթացքում ծնունդ առած բազմաթիվ հարցեր: Փոխարքան հայտնում է, որ ինքը հրաման է տվել, որ ապահովվի հայ գաղթականների վերադարձը իրենց պապենական հողերը, քանի որ նրանք են ընդունակ մշակել հողը, բարիք ստեղծել և ապահովել ռուսական բանակի պարենավորումը:

Չայկական խնդրին վերաբերող դիվանագիտական փաստաթղթերում երբեմն հիշատակվում է դոկտոր Զավրիևի անունը: Վերջինս Լոնդոնում և Փարիզում ռուսական դեսպաններին հանձնած իր գրության մեջ (Մայիս, 1915 թ.) այն միտքն է հայտնում, որ հայերը հույս ունենալով, որ պատերազմի ավարտից հետո վերջնականապես կլուծվի Չայկական հարցը, ակտիվ գործողություններ են ծավալել ռուսական բանակին օգնելու համար: Ստեղծվել են կամավորական ջոկատներ, որոնք ռուս զեներալների ու սպաների վկայությամբ աչքի են ընկնում իրենց կազմակերպվածությամբ ու խիզախությամբ: Գրության մեջ հիշվում է, որ 1914թ. օգոստոսիին Ամենայն Չայոց կաթողիկոս Գևորգ 5-րդը Կովկասի փոխարքային ուղղված նամակում ցանկալի է համարել պատերազմի ավարտից հետո թուրքահայերի ինքնավարության կարգավիճակի ստեղծումը Ռուսաստանի հովանու ներքո: Այնուհետև Զավ-

րիւնը հաղորդում է, որ Ռուսաստանի արտագործնախարարությունը քննարկելով իր առաջարկները, համաձայն է Հայաստանի ինքնավարության հաստատմանը թուրքիայի ինքնիշխանության պահպանման պայմաններում:

Զգուշանալով Ռուսաստանի ազդեցության աճից, Անգլիան և Ֆրանսիան իհարկե չէին կարող հաշտվել հարցի նման լուծման հետ: Անգլիական կառավարության արտակարգ լիազոր Մարկ Մայքսը Պետրոգրադում դեսպան Բյուքենենին (12-ը մարտի 1916թ.) գրում է. «Ինձ թվում է, որ մենք պետք է ընդունենք, որ հայկական վերջին կոտորածների ծայրահեղ դաժանության և անգթության պատճառով, չի կարելի հանդուրժել բուն Հայաստանը օսմանյան իշխանության տակ թողնելու հնարավորությունը»:

«Հայկական հարցը կարող է լուծվել.

ա) եթե հիմնվի Հայկական պետություն թուրքական սուվերենության ներքո,

բ) եթե ստեղծվի միջազգային վերահսկողության տակ գտնվող և չեզոք կառավարիչներ ունեցող հայկական կառավարություն,

գ) եթե Հայաստանը՝ առանց նախապատրաստության և լիովին հանձնվի Ռուսաստանին, ապա ռուսական քաղաքական սիստեմի մեջ կնեռառվի մի երկիր, որը լեփ լեցուն է Կովկասում և Պարսկաստանում գոյություն ունեցող հեղափոխական կազմակերպությունների հետ մշտական կապի մեջ գտնվող հեղափոխական ընկերություններով...

դ) եթե հարցը լուծվի այնպես, որ նախկին Հռոմեական կամ Փոքր Հայքը հանձնվի ֆրանսիային...»:

Պատահական չէ, որ արտագործնախարար Սազոնովը Փարիզում իր դեսպանին Զավրիկի ծրագրի կապակցությամբ հայտնում է, թե Ռուսաստանը չի կարող կողմ լինել Կիլիկիան ապագա հայկական մարզում ընդգրկելու հայերի ակնկալություններին, նկատի ունենալով ֆրանսիայի շահերի գերիշխումը Կիլիկիայում:

Ժողովածուի վերջում առանձին գլխով հրապարակված են ռուս գրողներ Վ.Բրյուսովի, Յ.Վեսելովսկու, Վ.Նիմերովիչ-Դանչենկոյի, Ս.Զարովի, Ս.Պիրվերդիևի, Ե.Ալեքսեևայի, Յ.Բարանովսկու, Ս.Կրոտկու, Վ.Օպոնինինի, Վ.Սայանսկու, Վ.Դադինայի, Ա.Կալեբրյակինի բանաստեղծությունները և հոդվածները հայ ժողովրդի, նրա մեծ ողբերգության մասին: